

ԲԱԺԱՆՈՐՉ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշանակալից համար  
Տարեկան 10 Ֆր.  
Վեցամսեայ 5 »

Մրտաանհմանի հա-  
մար Տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »

Ավերիկայի համար  
Տարեկան 2.50 ֆր.  
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

—(—

Մանուցանել տոյր 20 սան-  
քիս և ևրեֆիկ աւելի սան-  
քաւնեռու համար 20 010  
գեղջ կրնայ :

# ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémkarian  
(Autriche)  
Mehitharistangasse W. 4  
Vienne

Նախակ և քրտի դրկեյ  
և Խոսքոտքեան հասցիս  
—  
Г'одакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

## ՄԵՆԱՇՆՈՐԻՅԵԱԼՆԵՐ

Պօլիսը Հայաստան չէ :  
Մայրաքաղաքը և յետ ընկած  
խուլ անկիւնները միաստեակ  
պայմաններին մէջ չեն :

Այդպէս է ոչ միայն Տաճկաս-  
տանում, այլ և աշխարհիս բոլոր  
պետութիւններին մէջ, ուր տի-  
րում է բռնակալ կեդրոնացման  
սկզբունքը :

Պետերբուրգի կամ Պէկինի  
պայմաններին խիստ մօտ ծանօթ  
մարդը կարող է ոչ մի գաղափար  
չունենալ Ռուսիայի կամ Չինաս-  
տանի հեռաւոր գաւառներին մա-  
սին :

Որքան հեռանաք մայրաքա-  
ղաքից, որքան դէպի ներս,  
դէպի խուլ խորշերը թափանցէք,  
այնքան աւելի խտանում է խա-  
ւարը, բռնակալութիւնը, կամա-  
յականութիւնը . . .

Պօլիսը Հայաստան չէ :  
Պօլիս ծնած և Բոսֆորի զմայ-  
լելի տեսարաններին վարժած  
փափկասուն պարոնները կարող  
են ոչ մի էական գաղափար չու-  
նենալ տաճկահայաստանի մասին :

Խուլ անկիւնների գեոլոգը Պօլի-  
սում, դեպքանների և զրահաւոր-  
ների քթի տակ, չի կարող մըշ-  
տական գոյութիւն ունենալ :

Մի կիւրոսցի կամ եգիպտացի  
աւելի մեծ յարմարութիւններ  
ունի ճանաչելու կիլիկիան, քան  
մի պօլսեցի :

Մի կովկասցի աւելի ծանօթ է  
Վերին Հայաստանի հետ, քան մի  
պօլսեցի :

Ահագին հեռաւորութիւնը և  
հարողակցութեան ստանալու-  
կան պժուարութիւնները շատ  
քիչ թուով անհասանելի համար  
մատչելի են դարձնում Պօլսից  
գնալ խուլ անկիւնները :

Պօլիսը Հայաստան չէ :  
Եւ այն պօլսեցի «գրագէտ» և  
այլ էֆէնտիները, որ կարծում  
են, թէ Սուլթանի մայրաքաղա-  
քում ծնւած լինելով՝ ամէն տե-  
սակ մենաշնորհներ ունին հեղի-  
նակաւոր ձեւով, ոլիմպական

բարձունքից դատել հայկական  
գործերն ու հայոց երկրի պայ-  
մանները — այդ պարոնները մո-  
ռանում են, որ Պօլիսը Հայաս-  
տան չէ :

Միայն Տաճկաստանում որ  
լինելը դեռ բաւական է որ  
մարդ առէ, «ես դիտեմ տաճկա-  
հայաստանի պայմանները» :

Իսկ եթէ այդ իրատեսքը չի  
տալիս, աւելի եւս չի տայ ան-  
հատին իրաւունք կարծելու, որ  
իր այս կամ այն տեղը ծնած լի-  
նելն իսկ բաւական է յեղափո-  
խական և ա՛յն էլ «դեկավար» լի-  
նելու համար . . .

Պօլիս ծնւած լինելով, մարդ  
մենաշնորհ չի ժառանգում ան-  
պատճառ մեր աղջոյին փրկու-  
թեան գործի զեկը ձեռքն առ-  
նելու . . . միայն նրա համար, որ  
լաւ գիտէ, թէ ինչ արեց մի  
որ և է Ալըզեան, Նուրեան կամ  
Մազսուս :

Յեղափոխական գործի զեկա-  
վար լինելու համար պէտք է  
անձնազոհութիւն :

Պէտք է մտնել երկիր, ժողո-  
վրդի մէջ . ուսումնասիրել, հե-  
տադօտել տեղի վրայ : Պէտք է  
ճանաչել այն ժողովուրդը, որի  
համար աշխատում ես :

Պէտք է աչքով տեսնել, ական-  
ջով լսել, իր ձեռքով շօշափել,  
իր կաշու վրայ զգալ ժողովրդի  
քաջած դառնութիւնները :

Պէտք է նրա հետ տանջւել,  
նրա հետ ուրախանալ, նրա ցա-  
ւերով ցաւիլ . . .

Պէտք է կուրի իսկական դաշտի  
մէջ երկար ժամանակ յեղափո-  
խական գործեր վարել, փորձա-  
նութիւն ձեռք բերել . . .

Ունի՞ք այդ անձնազոհութիւնն  
ու փորձառութիւնը՝ համեցէք,  
զեկավարեցէք . եթէ ոչ՝ հեռա-  
ցէք, ասպարէզը աւելի ար-  
ժանաւորներին :

Այս կամ այն տեղը ծնւած լի-  
նելը ոչինչ չի նշանակում :

Գ.Ս.ՍՊԱՐ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ . 21 Մարտ  
Նուիրաւստօթիւններ . — Հայերի կրօ-  
նագիտութիւնը Սաղմասում

Պարսկաստանում տիրող սովը,  
թանգութիւնը և Տաճկաստանից  
եկող գաղթականները մի մեծ  
պարտականութիւն են դրել պարս-  
կահայերի վզին, կերակրել սո-  
վածին, օգնել չքաւորին և պա-  
հել գաղթականներին ու որբե-  
րին . դա պարսկահայերի ուժից  
բարձր գործ է, Այստամենայնիւ,  
իր հոգացող և պահպան հրեշ-  
տակ, դուրս է եկել «Թաւրիզու  
Հայուհետց Բարեգործական» ըն-  
կերութիւնը . հասնում է ամեն-  
քին . հիւանդին դարման, սովա-  
ծին սնունդ, գաղթականին հան-  
գիստ կեանք, որբերին պաշտ-  
պանութիւն, չքաւորներին օգ-  
նութիւն և սոգէտներին մտաւոր  
ըլոյս է մատակարարում :

Սակայն, եթէ նկատի առնելու  
լինենք ընկերութեան նւթա-  
կանը, այս օգնութեան ու նպատի  
գործը իր ուժերից շատ վեր է .  
և ահա այս պատճառով արտա-  
սահմանեան հայերի վզին է ծան-  
րանում ընկերութեան մեծ բեռը  
թեթեւացնել, նրան օժանդակե-  
լով և դրամական նուէրներ ու-  
ղարկելով :

Պէտք է խոստովանած, որ վեր-  
ջերումս արտասահմանի հայերի  
պարտաճանաչ և ազնիւ մասը,  
իր առատ նուէրներով, ընկե-  
րութեան օգնութեան է հասնում,  
և ընկերութիւնը խզծի մտօք  
կատարում է իր պահպան  
հրեշտակի գերը, փողերը ճիշդ  
իրանց նպատակին ծառայեցնե-  
լով : Մինչեւ այժմ, զանազան կող-  
մերից ուղարկուած փողերի գու-  
մարը հասնում է գրեթէ 4—5,000  
թումանի, սակայն կարիքը այն-  
քան մեծ է, որ այդ թումանները  
արեւի կիլիչ ճառագայթների  
ներքեւ հարող սառոյցի նման  
իսկոյն հալվում և սպառվում  
են . . . : Պէտք է շարունակել  
նուիրատուութեան օգնութեան  
գործը, մինչեւ սր ընդհանուր  
վիճակը մասամբ բարւոքվի :

Նուիրուած գումարների մասին

յաճախ թերթերում տեղեկու-  
թիւններ են տրվում. աւելորդ եւ  
համարում մանրամասն ցուցակ  
ներկայացնել այստեղ, միայն կը  
յիշեմ վերջին նուիրատուութիւն-  
ները .

1. Մանչէստրից Պ. Գառնիկ  
Ֆընտըրլեան ուղարկել է 15  
ոսկի .
2. Ատարխանից Գեր. Արիս-  
տակէս եպոս. Սեդրակեան հան-  
գանակելով ուղարկել է 75 ռուբլի  
50 կոպէկ :
3. Նշաբուրի (Սպահանում) 4.5  
հայ վաճառականներ 46 թուման  
(Մի թումանը գրեթէ 5 ֆրանք  
արժէ) .
4. Մոսկվայի հայ ուսանող-  
ները սովեալների համար 108  
րուբլի հաւաքելով, Արժ. Բագա-  
րատ արեղայ Վարդաղարեանի  
միջոցով Սրբազան առաջնորդու-  
ղին են ուղարկել :

Սաղմաստի հայերի վիճակը և  
գրութիւնը անտանելի է դար-  
ձել . կաշտակերութիւնը և կո-  
ղովուտը վերջին ծայր յուսահա-  
տութեան են մատնել հայ ժողո-  
վուրդը, և այս մայրայեղ յու-  
սահատութիւնից ու անտանելի  
հարստահարութիւնից մի գիւղի  
հայ ժողովուրդը իր քահանայով  
ստորագրել է ուսադաւան լի-  
նենք . . . : Մենք արդէն գուշակել  
էինք մեր նախորդ յօդուածնե-  
րով այս աղգասպան շարժումը .  
Գարմանը գրեթէ անհնարին է .  
մինչեւ որ կառավարութեան  
գրութիւնը չը փոխուի, հայերի  
վիճակն ու կացութիւնը չէ փոխ-  
վելու . . . :

ՄԻՐՉԱ.

Ուսքր , 27 Մարտ

Ուսքրը, Պօլսի ընէն յետոյ, Ա.  
մերիկայի Մասաչուսէց նահանգի  
ամենէն վաճառաշահ և բազմա-  
մարդ քաղաքն է : Ունի 120,000  
բնակիչ : Գիրքն է լեռնային և  
առողջարար : Հայերը սկիզբէն  
սիրելով այս քաղաքի դիր-  
քը և կլիման, մեծ բազմութեամբ  
գաղթած են : Գաղթականութեան  
սկիզբները, բաղմամբ հայեր,  
նիւ-Յօրք հասնելէ վերջ, Ամն-

բիկա հասած չէին համարիր, մինչև որ Ուսթըր հասնէին :

Ուսթըր Ամերիկայի ամենէն հայաշատ քաղաքն է : Մօտառապէս կան 800 անհատներ և 100 բնտանիքներ : Մեծ մասով գործարաններու մէջ կաշխատին : Միակ գործարանի մը մէջ, մինչև 300 հայ գործարաններ կը բանին : Առանձին գործով զբաղողներ ալ ունինք, որոց մէջ կան սալորիչներ, կօշկակարներ, նպարավաճառներ, շաքարավաճառներ, դերձակներ և մրգավաճառներ : Երեք գործարանատէր հայեր ալ ունինք :

Ուսթըրի հայերը ընդհանրապէս ներթական լաւ դիրք ունին, միայն թէ տեղացի ամերիկեան ժողովուրդը բաւական նեղութիւն կուտայ : Սակայն կը յուսանք թէ հետզհետէ պիտի վարժուին :

Ուսթըր Ամերիկայի հայերուն Երուսաղէմն է : Տօնի և Զատիկ օրեր, ուրիշ քաղաքներէ բազմաթիւ հայեր կուգան այցելելու Սուրբ Փրկիչ եկեղեցին, որ միակ է իր տեսակին մէջ ամերիկեան հողին վրայ : Ժամանակ մը, Ուսթըր նշանաւոր էր նաեւ իր համակրութեամբ դէպի ազգային եղափոխութիւնը, իր ազատ լսարանով և իր ճոխ ընթերցարանով : Սակայն, վերջերս սկսաւ կորսնցնել իր համբաւը : Երկուստարդ, յառաջդիմասէր վարդապետ մը ունէինք որու շնորհիւ երբեմն երբեմն լսարան կուներայինք : այսօր ազ ալ չը կայ : Միջնադարեան դաղափարներով սնած եպիսկոպոսը, առանց ժողովուրդին գիտութեան, հեռացուց զայն, և իր խնկարկունեւորով չըջապատուած, կը ջանայ մեզ թմբեցնել Բայց ժողովուրդը սկսած է շարժիլ : ասոնք ալ կը շտկուին :

ՀԱՅՐ

Սիդիսրի, 31 Մարտ

Շարժումի 115 թիւին մէջ Դանակ կեղծանունով հերքում մը կար նոյն թերթի Գանակ ստորագրութեամբ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Ս Ա Շ Ի Ա Ր Հ Ա Յ Ի Ն Վ Ի Շ Շ

(20 ԱՅԻ «Paris» ՎեՊԸ)

Ձարմանալի գրուածք է այս Պարիզ անունով վէպը, և շատ քիչ նման է սովորական վիպասանութիւն կոչուող հեղինակութիւններին : Անցեալ ամիսներու Պարիզում առանձին գրքով գուրս եկաւ այդ վէպը, որ Քրանսիական մամուլի և գրականութեան մէջ նշանաւոր երևուցիկ է համարվում : Բազմաթիւ այցելուներին, որոնք անգաղար դիմում են հեղինակին՝ իր վէպի մասին հարց ու փորձ անելու, Ձօլա տալիս է կարելի եղածին չափ մանրամասն բացատրութիւններ :

Հեղինակի ասելով նրա Պարիզ վէպը, որ շարունակութիւն է

յօդուածին դէմ, որ նախապէս հրատարակուած էր : Միջանկեալ ըսեմ թէ Գանակ և Դանակ դիւրար կը հակասեն : Երկուքն ալ կը չարագոնցեն : Երկուքն ալ պատշաճութեան օրէնքէն դուրս ելած էին վարդանանց սօնին :

Գանակ կըսէ թէ Պ. Ոստանիկ պարզ հակահասարակութիւն ըրաւ, մինչդեռ իրողութիւնը այդպէս չէ : Աղքատինում ընկերութեան մը պէտքերն վրայ խօսելէ յետոյ, Պ. ուսուցչի անպէտ խօսքերուն ակնարկելով՝ ըսաւ թէ քանի որ այս օրը վարդանի յիշատակին նուիրուած է, և հոս խմբուած ենք վարդանանց յիշատակը սօնելու, վարդանի աննպաստ և վասակի նպաստաւոր յայտնուած կարծիքները անտեղի են : Նաեւ ըսելով թէ վարդան իր փառասիրութեան համար մեռաւ, այսպիսի խօսք մը անարգանք է այս հանդէսին հերոսին յիշատակին և ոճրագործութիւն՝ այդ նուիրագործուած ժողովրդական դասին :

Գանակ կը սխալի երբ կը սնդէ թէ Ուսուցիչը չէ հարուածած վարդանը և Ե. դարի կղերք : նա անխնայ կերպով դատափեանց զայն, անուանելով մոլեռանդ և անձնական փառքի հետամուտ իսկ Ե. դարի կղերք, առանց բացատրութեան, ջանաց ներկայացնել կօյր, մոլեռանդ և գրգռիչ : Բացառականք թէ վարդան իր փառասիրութեան համար մեռաւ : Յաղկերտ ալ հայ կղերի մոլեռանդութիւնը պատժելու համար, զանազ Պարսկաստան սարաւ բանտարկեց :

Կարգապահութեան ոգիին հակառակ չէր քրթնիչը և մրմալ, երբ ուրիշ մը բեմը ելաւ փաստերով և քաղաքավարութեամբ ջրելու համար ըսուածները : Ամէն մարդ իր մասնաւոր կարծիքը կրնայ ունենայ այս խնդրին մասին, բայց դարեւ հեռէ նուիրագործուած և ազգայնութեան անարատ գրող մը ստացած, ազգային դիւցազնական այսպիսի մեծ սօնի օր ելել և այդ օրուան կտրիճ հերոսին և անձնագոծ նահատակներուն անազարտ յիշատակները արատաւորող կարծիքներ յայտնելը՝ դատապարտեցիկք և պիտի դատապարտենք միշտ : ( )

( ) ( )

(\*) Այս յօդուածով վերջնականապէս կը փակենք այս խնդիրը :

Իր. Խ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ, ՆԱՄԱԿ ԻՄԱՍԳՐՈՒԹԵԱՆ

«Իրաւունք»-ի 26 թուով ինծի դէմ կրկնամուսնութիւն խորագրով խմբագրական յօդուած մը տեսնուեցաւ : Ճշմարտութիւնը անկեղծօրէն պիտի բացատրեմ :

Երկու տարիի չափ տեղւոյս Ս. Եկեղեցւոյ մէջ պաշտօնավարութեան միջոցին, գրեթէ հարիւրի մօտ ամուսնութիւններ կատարուեցան, մեծ մասամբ գաւառացիներէ, չորս վիկաներով : Իմ առած աղեկութեան համեմատ, սոյն գրութիւնը այս տեղ Այցելու Հովիւ վարդապետները հաստատած են, ոչ թէ քահանաները : Նոյն իսկ տեղւոյս Ս. Եկեղեցւոյ պաշտօնեայք ի հարկին պատրաստ են այս մասին ճշմարտութիւնը յայտնել : Աւելին՝ տեղւոյս Աւագերէց Արժ. Տէր Մարտիրոս քահանայէն կրնայ ստուգուիլ, երբ որ Ս. Երուսաղէմէ վերագառնայ :

Կալով Մշոյ Աւրան գիւղացի Մանուկ Յարութիւնեանի կրկնամուսնութեան խնդրոյն, յիշատակելով Մանուկը, Աւագերէց քահանային և Հոգաբարձութեան արտօնագրով և հրամանով, պատկեցի : սակայն պատասխանատուութիւնը կը ծանրանայ հրամայող Աւագերէց քահանային վրայ :

Հաճեցէք սոյն հերքմագիրս հիւրընկալել «Նարժում»-ի մէջ :

Մնամ աղօթարար  
ԳԵՈՐԳ ԳԶՆՏ, ՀԻՒՐՄԻԻՉԵԱՆ  
Վառն, 12 Ապրիլ 1898

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տ. Փասուլեան, ծանօթ դերասանը, ի նպատակ իրեն տրուած ներկայացումին առթիւ Փ. Պոլէն գրուած նամակով մը ջերմ շնորհակալութիւն կը յայտնէ նոյն քաղաքի պուլկար դերասանական խումբին անդամներուն, որք հակառակ հայկական Վէսէլօ խումբ

բին յարուցած արգելքներուն, ջերմապէս և մեծ անձնուիրութեամբ աշխատեցան, և ամենայն յաջողութեամբ ներկայացուցին Ա. Տիւմայի «Կճէագործ» թատերախաղը 3 արարուածով : Նոյնպէս իր շնորհակալութիւնը կը յայտնէ Տիկին Օֆէլիայի և Տ. Հայկ-Արամի, որք նոյնպէս անձնուիրաբար օգնեցին միւս երկու խաղերուն մէջ : Նաեւ Տ. Թօքաթլեանի որ տոմսակներու սպառումին և ուրիշ գործերու մէջ մեծապէս օգտակար եղաւ : Տ. Փասուլեան, շնորհիւ հայ և պուլկար հասարակութեանց նիւթական օգնութիւններուն, կերթայ Եգիպտոս իր կորուսած առողջութիւնը վերստին գտնելու համար :

— Վառնայի գաղթական թատերախումբը, որ ստորադասութիւն տեսած էր «Վասպուրականի Հերոսներ» թատերախաղը ներկայացնելու ի նպատակ հայաստանի սովածնիւրուն, յետագած է զայն, վասն զի Վառնայի հագաբարձութիւնը խոստացած է ընդհանուր հանգանակութիւն մը կատարել, սակայն կարեւոր գումար մը ճարելու համար : Թատերախումբը կը յուսայ թէ այս խոստումը պիտի կատարուի շուտով :

— Վեհ. Կաթողիկոսը վերագարձած է Էջմիածին, առանց որ եւ իցէ դարման գտնելու դպրոցներու խնդրին : Ռուս բոլոր պաշտօնական անձերը խիստ գէշ աչքով կը դիտեն ռուսահայերու զարգացումը : Վեհ. Կաթողիկոսը շատ լղացած է իր անյաջողութեանը համար : Այլքսանդրապոլի քաղաքապետը հաց և աղ մատուցեց է Վեհ. Կաթողիկոսին, որ մեծ պատիւներով ընդունուեց է քաղաքացիներէն :

— Սիմֆերոպոլի մէջ պարահանդէս մը տրուած է ի նպատակ տեղական հայ դպրոցին և 600 ռուպլի հատկութ գոյացած : — Ռոտտոթոյի, Կեսարիայի,

որ Պարիզի խուլ փողոցներում ապրող չքաւորութեան ու սովի անթիւ զահարից մէկն է : Այդ հասարակ և պարզ հանգոյցի շուրջը՝ Ձօլայի կախարակական գրչի ու ժող հաւաքվում է ամբողջ Պարիզի կեանքը—դեռ աւելի— ամբողջ կեանքային, ամբողջ մարդկութեան կեանքը : Չէ՛ որ Պարիզը համայնաբանական քաղաք է, և նրանում ևսացող կեանքն էլ ունի համաշխարհային բնաւորութիւն . . .

Նախ մի քանի խօսք Ձօլայի վիպասանական ուղղութեան մասին : Ռուս յայտնի գրողները սովորաբար ինք կերպով են վերաբերում զէպի Ձօլայի գրականական մեծ անունը, առարկելով, որ Ձօլան իր վիպական գրուածքներին մէջ, չէ ստուել ոչ մի խոշոր գեղարուեստական աիպ, ոչ մի աչքի ընկնող հոգեբանական անձնաորութիւն, որոնցով իրաւամբ հպարտանում է ռուսաց գրականութիւնը ի զիմաց Տօլստոյի, Տուրգենիւի, Դաստայե-

վրակու ստեղծած նշանաւոր սիպերի և հոգեբանական ու ժող անհատներին Մասնացոյց անելով Ձօլայի վիպասանական հանճարի թերութեան վրայ՝ ուս կրկնակողները մտաւնում են, կամ թէ չեն ուզում առանձին ուղղորթիւն դարձնել Քրանսիացի այդ մեծ գրողի ինքնուրոյն ստեղծագործական յատկանիշները վրայ : չեն ուզում լուրջ վերաբերուիլ զէպի այն խնդիրը, որ Ձօլան, առ հասարակ, թէ իր մաքրի և թէ դեղարուեստական ընդունակութիւնները կողմից մի չը տեսնուած երեւոյթ է, մի այնպիսի հանճար է, որ ստեղծուած է ոչ թէ ուրիշներին հարթած ճանապարհով գնալու, այլ ստեղծելու վիպագրական արուեստի մէջ նոր ուղղութիւն, նոր և ոչ մի ժամանակ չը տեսնուած գեղարուեստական դպրոց : Եւ իրաւ, Ձօլան ըստեղծել է վիպագրական նոր դպրոց, որին նա ինք «բնագիտական» կամ «նատուրալիստական» անուն է տա-

Պրուսայի և Պրիւսիայի առաջնորդներուն հրահանգ տրուեցաւ Պատուարքարանէ, որպէս զի, եպիսկոպոս ձեռնադրուելու համար, պատրաստուին Ձատկէն յետոյ էջմիածին ուղեորելու: Արդեօք վահան վարդապետ Տ. Մինասեանի կարգը ե՞րբ պիտի գայ:

— Ի նպատակ կարօտեալներուն էսկիւնէհիւրի հայերը ութը սակի, Ռօպէրթ-Փօլէճի հայ ուսանողները 25 սակի, Ռոմանիոյ Սոթրով քաղաքի ազգայինները 160 ֆրանք, Պատմութի հայերը 10 սակի հանգանակելով զրկած են Պատրիարքարան:

— Ռուս կառավարութիւնը որդիւծ է կողմասի Բարեգործական ընկերութեան հաշտողակցի իր մասնաճիւղերու հետ: Ամէն մասնաճիւղ իր սեղանին ուժերով պիտի գործէ, և յարաբերութիւն պիտի չունենայ կեդրոնին կամ միւս ճիւղերուն հետ: Այս մասին կառավարութիւնը շինած է կանոնագիր մը, զոր ընդունած են ընկերութեան անդամները:

— Կրօնական ժողովը, չըջարեալանով մը, կարգիլէ օտար կղերներու քարոզ խօսիլը հայ եկեղեցիներու մէջ: Այս պատուէրը չը գործադրող եկեղեցականները պիտի պատժուին:

— Պաքուէն կը գրեն թէ Մարտ 30ին կատարուել է Սվաճեանի նուազահանդէսը. որ բազկացած էր երկու մասերէ: Առաջին մասը կը պարունակէր ինը կտորներ զանազան հեղինակներէ. իսկ երկրորդ մասը վեց սեփական կտորներ: Տիխիսի մամուլին աննպատակ խօսքերուն վրայ, սրահը կէս առ կէս պարպ էր, այնպէս որ Սվաճեան հաղի կարողացած է ծախքը գոցել: Սակայն, ներկայ եղողները մեծ գոհունակութիւն յայտնեցին արուեստագետներու համար:

— Տրապիզոնէն «Մշակ»-ի կը գրեն թէ հոն ֆրանսացի ֆրէրները ջանացել են որբանոց մը

բանալ: Թէեւ հիմնադիրներու ցանկին մէջ կար ֆրանսական հիւպատոսին անունը, և պատույնը անգամ նշանակուած էր Կ. Պօլսի ֆրանսական դեսպանը, բայց քաղաքին յոյն և հայաառաջնորդներուն առարկունքներուն վրայ, տեղական կառավարութիւնը իր իրաւասութիւնէ վեր նկատել է անոր արտօնութիւնը տալ, և անգեկագրեր է Կ. Պօլսի:

— Կ. Պօլսի հայոց Խառն ժողովը իր հրատարականք տուած է: Պատրիարքը կաշխատի Ազգային ժողովը գումարելու հրամանը տանել թուրք կառավարութիւնէն, օրինաւոր մարմիններ կազմելու համար:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Տ. Խաչիկ Մարտիրոսեան, Երևան. — Մեր յայտարարութեան համեմատ, չենք կրնար հրատարակել ձեր պատասխանը, ամենայն հաւանականութեամբ խմբագրատան մէջ կաշապարուած, մարտ 36 (37) թուակիր «Իրաւունք»-ի նոտալոյի նամակին: Կը գրէք թէ բացարձակ զրոյարտութիւն է «Իրաւունք»-ի գրածը թէ մէկ տարեկան լսածնեզին պարաք ունիք անոր: Ուրեմն, գրեցէք անոր, որ պարտաւոր է իր թերթին մէջ գոհացում տալ ձեզ:

— Վշտակիր, Ուէսթ-Հոպօքըն. — Ուրիշ թերթերու մասին քննադատութիւններ կը ընդունինք, բայց ոչ յարձակումներ:

— Հ. Չ. Ուէսթ-Հոպօքըն. — Երեք ամիսը մի անգամ ուղարկեցէք:

— Փրօվիտէնսէն դեկ. 9, 1898 թուակիր 4 տուարնոց մընի օրտըրի մը ծանուցանող թուղթը ստացած ենք, սակայն դրամը տակաւին հասած չէ: Դրամը զրկող մեր անձնօթ բարեկամէն կը խնդրենք որ հարկաւորը տնօրինէ, և մեզ ալ իմացնէ:

— (—)

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԱՆԳՂՈՅ ԱՉՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՍՍԱԿԵՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի պատմութեան մէջ, քիչ կուտակցութիւններ կան որքայնչափ փառաւոր գործունէութիւն յուցուցած են, որչափ Անգլիոյ ազատական կուտակցութիւնը: Մանաւանդ ներկայ դարու սկիզբէն հետէ, իր գործունէութիւնը ազգած է ընկերային ամէն խաւերու վրայ: Իր մէջ սնած են հսկայ հանճարներ, անկեղծ հայրենասէրներ և աշխուժ մարդասէրներ: Զը կայ աշխարհի մի անկիւնը ազատական և մարդասիրական դատ մը, որ չը գրաւել այդ կուտակցութեան մասնաւոր համակրութիւնը:

Կլատսթընի օրով այս կուտակցութիւնը հասաւ իր մեծագոյն զարգացումին: Ամբողջ Անգլիա ազատական եղած էր. երկրին մէկ ծայրէն միւսը անոր շունչովը կողբուրէին:

Սակայն եկաւ ժամանակ մը երբ այդ ազատականութիւնը— Կլատսթընի և Ռօզպէրիի ազատականութիւնը— չը գոհացուց Անգլիան: Արդէն, պահպանողականները փոխ առած էին անոնց ծրագրին բազմութիւ մասերը: Յորչափ Կլատսթըն ողջ էր և կը վարէր գործերը, այդ բանակը չապստամբեցաւ իր վարիչներուն դէմ. բայց անոր քաջունէն յետոյ, սկսաւ կռիւը հին ազատականութեան դէմ: Նոր-նոր գաղափարներ մտած էին. ընկերային ազգին խնդիրներ կային մէջտեղ. անգլիական միութեան կողմէր աւելի լայն շրջանակի մէջ ապրիլ:

Հայկական խնդրին ժամանակ սկսաւ ազատական և ներկայի պահպանումը: Պուռթուա հին գլուխ ազատականները ջերմապէս հակառակեցան հայկական խնդրին մէջ գործօն դեր մը կատարելու:

Ի զար ձօն Մօրլի և Հարբուրթ իրենց սկզբունքները կը յիշեցընէին: Լօրտ Ռօզպէրի, պուռթուա ազատականներու պետը, կը քաջուէր հրապարակէն և հայկական խնդրին ալ կը թաղուէր մտիրներու տակ:

Պահպանողականները այս պահպանումէն յուսալից՝ սկսան արշաւանքներ կազմել աշխարհի ամէն կողմը: Գրաւեցին Սուտանը, խոսովութիւններ հանեցին Թրանսովալի մէջ: Լօրտ Ռօզպէրի խմբակը միացաւ անոնց, ամբողջ աշխարհը բաժնելու մէկ երկու պետութեանց հետ:

Այսօր Անգլիոյ ժողովուրդը ամէն ժամանակէ աւելի յարած է ազատական գաղափարներու: Վերջերս կայարաւոր գլուխային ժողովներու և քաղաքացիութեանց ընտրութիւնները հաստատեցին այս իրողութիւնը: Բայց պաշտօնական ազատական կուտակցութիւնը, որ խորհրդարանին մէջ կը գործէր, այժմ գրեթէ գոյութիւն չունի: Թուր կապերով միացած խմբակներու բաժնուած է այն, և այդ կապն ալ քիչ ատենէն բոլորովին պիտի խլուի: Յառաջիկայ ընտրութեանց միջոցին, այս խմբակները պիտի գործեն ընկերվարական, արմատական, ժողովարական, հակակղերական և ուրիշ անուններու տակ: Եւ ո՞վ դիտէ, թերեւս աշխարհ մեծամեծ օգուտներ պիտի վայելէ այս փոփոխութեանէն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար առողջապահական վարչութիւնը մի շրջաբերականով կը ծանուցանէ թէ ժանտախտը Արապիայի մէջ կը տիրէ: Կասկած կայ թէ ուխտաւոր թուրքերը, իրենց վերադարձին, ժանտախտը մտցնեն Թուրքիա կամ Կ. Պօլսի: Հետեւապէս առողջապահական վարչութիւնը որոշած է որ, եթէ եւրոպական

լիս, Ի հարկէ ամեն տեսակ նորութիւն, ամեն նոր գաղափար սկզբում շատ քիչ համակրողներ է ունենում, որքան էլ որ հանճարեղ լինի այդ նորութեան քարոզողը: Մարդկութիւնը, վերջրած ընդհանուր առմամբ, միշտ եղել է պահպանողական, անշարժ մի ոյժ, որ ամուր կապուած է իր սովորական հին մտքերի, կարգերի ու հակումների հետ: Այդ անշարժ մեծամասնութիւնը միշտ հակառակ է եղել նորութիւններին, միշտ հաշտել ու քարկոծել է ամեն տեսակ նորութիւն, ամեն տեսակ ինքնուրոյն, սովորական, կարգից գուրս եկող մի երեւոյթ: Նոյնը պատահեց և Չօլայի հիմնած նոր վիպագրական դպրոցի հետ: Ըստ ամեն կողմից սկսեցին յարձակուել Չօլայի վրայ, որ ամ վէպը ուղու է բոլորովին ոչնչացնել, որ վիպասանական ստեղծագործութիւնը չնորհիւ Չօլայի նոր ուղղութեան, կորցնում է իր «աղը» և պառնում է հասարակ

ուստիական արձանագրութիւն— «պրօսոփօլիզմ»—ինչպէս հեզնօրէն անուանում էին շատ յայտնի քննադատներ: Իր ժամանակ Չօլան շատ յօդուածներ է գրել, որոնց նպատակն է եղել պաշտպանել և բացատրել նատուրալիստական ուղղութիւնը վիպասանութեան մէջ: Բայց անհամեմատ աւելի լաւ, քան այդ յօդուածներով Չօլան ապացուցեց իր միաբը և փառաւոր յաղթութիւն տարաւ իր գրած դրամանալի վէպերի շնորհիւ: Իրա վէպերը այժմ կարդում է ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը, և ի՞նչպէս է կարդում. յափշտակութեամբ, հոգեկան ամենաբարձր դմալու թեամբ... Եւ այդպէս Չօլան, իր դիւթական հանճարի շնորհիւ, ապացուցեց, որ իր ստեղծած «քննադատական» ուղղութիւնը կարող է շատ մեծ յաջողութիւն ունենալ վիպագրութեան մէջ, որ այդ ուղղութիւնը միանպատակ կերպարանափոխում է գեղարուեստական

տեսակետը վէպի մասին. հիմեղով ու բաց անկող գրականութեան մէջ մի նոր և չը տեսնուած հասարակական տեսակէտ:

Չօլայի այդ նոր հասարակական տեսակէտի հետ ծանօթանալու համար, պէտք է կարդալ և ուսումնասիրել նրա վէպերը: Այստեղ ընթերցողի առջև բացվում է մի այնպիսի աշխարհ, որ թէ իր համաձայն ընդարձակութիւնով և թէ չլացուցիչ իրական ճշտութեամբ միանգամից գրաւում, կաշկանդում է ընթերցողի ուշքն ու միայր:

Չօլան իր վէպերի մէջ չի գուրս բերում ուժեղ անձնաւորութիւններ, հերոսներ, հոգեկան ու «ախտաններ», որոնք իրանց մեծ հոգեկան ոյժերի յարմար՝ մեծ-մեծ գործերի են ձեռնարկում, և ընթերցողին զարմացնում են իրանց հոգեկան մեծութիւնով, կրքերի, ցանկութիւններով, ձգտումների ընդհարումով, դրամայով...

Անհասանելի կեանքով Չօլան շատ քիչ է գրաղեցնում իր ընթերցողին: Դրա փոխարէն նա ցոյց է տալիս իր ընթերցողին աւելի մեծ, աւելի ընդարձակ երեւոյթներ. — նա ցոյց է տալիս հասարակական գասակարգերի, կուտակցութիւնների փոխադարձ կապը և յարաբերութիւնները. նա նկարագրում, պատկերացնում է ամբողջ մի սոցիալական կազմակերպութիւն, ահագին, հսկայական ցանկութիւններով, կրքերով և միմեանց հակասող շահերի, ձգտումների ընդհանուր մրցումով, ընդհանուր սոցիալական դրամայով: Փոխանակ անհասանելի բարդ հոգեբանութեան, Չօլա իր վէպերի նիւթ բնարում է միշտ հասարակական հոգեբանութիւնը և զարմանալի հմտութեամբ կարողանում է բաց անել աշխարհի առաջ հայտնաբերած, ամբողջ հոգեկան գաղտնիքները, դասակարգերի ու կուտակցութիւնների ներքին միտումները: Եւ վերջ ի վերջոյ ըն-

Թուրքիոյ մէկ կէտին վրայ ժանտախաւ միակ դէպք իսկ պատահի, բոլոր ճամբորդները ընդունիլ միայն Վառնայէ, Պուրկազէ կամ Հեպիպէզէն, զանոնք 10 օրուան քարանձինայի ենթարկել, անոնց կերակուրները այրել և օրական երկու ֆրանք վարձք պահանջել: Պուրկարահպատակ աղքատները ձրի:

— Զրոյց կը շրջէր թէ Սօֆիայի քաղաքապետութիւնը պիտի լուծուէր: Սօֆիայի վաճառականները աղերսագիր մը ներկայացուցին իշխանին, որպէս զի չը լուծուի մինչեւ իր օրինակը ժամանակը: Միւս կողմէ, երեք ուղերսագիրներ տրուած էին ֆնայուն յանձնաժողովին՝ քաղաքապետութեան լուծումը պահանջող: Մնայուն յանձնաժողովը նկատելով թէ իրենց ամբաստանութիւնները հիմ չունին, մերժեց լուծել զայն:

— Ս. Բեդերսպուրկէ կը զեկուցանեն թէ Մ. Կրէքօֆի Թըրնովայի մէջ խօսած ճառը շատ լաւ ապարտութիւն դործեր է ուսու պետական շրջանակներու մէջ: Մ. Կրէքօֆ յայտարարած էր թէ Ռուսիա չուզեր պուլկար կառավարութեան ներքին գործերուն միջամտել:

— Ընտրական պայքարը կը շարունակուի մեծ ոգեւորութեամբ: Կիրակի օր, Տր. Սթոյլօֆ և իր երկու նախարար ընկերները Վառնա եկած էին: Գիշերը ազատականները մեծ ցոյց մը կազմակերպեցին Սթոյլօֆի դէմ: Ապագայ երեսփոխանները ամէն օր ճամբորդութիւն կընեն, իրենց գիրքերը զօրացնելու համար:

— Սօֆիայի թերթերը ստոյգ աղբիւրներէ կը տեղեկանան թէ Եուսոֆ Ալի պէյ, «Իթիֆաքի» նախկին խմբագիրը, ոստիկանութեան հսկողութեան ներքեւ է, և աչքէ չեն հեռացներ:

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փիլիպեան ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Զօրավար Լօթըն, բազում գիրքեր և քաղաքներ գրաւելէ յետոյ, չը կըցաւ յառաջանալ: Թողլով Սանթա-Քրուզ և շրջակայ քաղաքները, քաջուցաւ Մանիլա, ուր կը վախճուի թէ չվտարութիւններ ծագին: Զօրավարը յայտարարած է թէ 100,000 ամերիկեան զինուորներ պէտք են կղզին գրաւելու և պահելու համար:

Ամերիկեան կամաւորները չեն ուզեր կռուիլ ապստամբներուն դէմ, որովհետեւ Սպանիացոց հետ կռուելու համար գրուած էին: Արդէն իրենց պայմանաժամը լրացած է: 14,000 կանոնաւոր զօրքեր Փիլիպեանները զրկուեցան Ամերիկայէն:

Ակինալայի պաշտօնակալները Փարիզէն կը հեռագրեն ամէն կողմ թէ ծուղակի մէջ ձգած են երկու ամերիկեան զօրավարները, և գերի բռնած են բաւական թիւով ամերիկացի զօրքեր:

ՌոնիՍՍԱՆ ԳՈՐԾԵՐ. — Ֆինլանտիայի կառավարիչը շրջաբերական մը հրատարակած է, ծանուցանելով թէ Զօրին յայտարարութիւնը սխալ հասկցուած է ժողովրդեան մէջ. և թէ Զօրը նպատակ չունի փոխել Ֆինլանտիայի ներքին կարգադրութիւնները:

— Քիէվէն կը գրեն թէ ուսանողական մեծ չիփթութիւններ ծագած են: Խաղաղութիւնը պահպանելու համար, կառավարութիւնը զօրք չըրկած է: Բազմաթիւ վերաւորներ կան, և բազում ուսանողներ ձերբակալուած են:

ՍՊԱՆԻԱ. — Խորհրդարանի ընտրութիւնները կատարուեցան: Մ. Սիլվէլայի կուսակիցները մեծամասնութիւն կը կազմեն: 14 հանրավարական երեսփոխաններ ընտրուեցան, որոնցմէ մին է Մ. Բասթէլար, նշանաւոր հայա-

սէրը: Ընկերավարականները կը բողոքեն ընտրութեանց դէմ:

— Գարլիօթները միշտ պատրաստութեան վրայ են. կաշխատին զէնք մտցնել ծովի կողմէն: Ամբողջ Սպանիոյ ծովեզերքը թնդանօթակիրներ կը հսկեն:

ՁինԱթԱֆի ՎեձԱՌՈՂՎԸ. — Զարին ծրագիրը, ի մէջ այլոց, կը պարունակէ ծովային և ցամաքային զօրքերու նուազումը, նոր զէնքերու և նոր պայթուցիկ նիւթերու արգելումը, արդի պայթուցիկ նիւթերու չափաւորումը և ընդժողկայ թորփելանաւերու չը գործածուիլը: Ինչպէս կը տեսնենք, սակաւին շատ հեռու ենք ընդհանուր զինթափի գործադրութենէն: Մտադրութիւն կայ միջազգային իրաւարարան ժողով մը կազմելու թէ յաջողի, մեծ բարիք մը պիտի ըլլայ մարդկութեան համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Պէլճիքայի մէջ ամխահանքերու գործարանները գործադուլ ըրած են իրենց օրականներուն վրայ հարիւրին քսան յաւելում պահանջելով: Բոլոր գործարանները մէկ քանի օրէն կը զաղրին, ամուսի պակասութեան պատճառով: Կը կարծուի թէ քիչ ժամանակէն գործարանատէրները պիտի ընդունին գործատուներուն բոլոր պահանջները:

— Ի պատիւ ժիւլ Ֆէրրիի, արձան մը կանգնուեցաւ Թունուզ:

— Ամերիկեան կառավարութիւնը Մարտի 15-էն զրահաւորը չըրկած է Սաւոայի շուրթերը: Գերմանացիք չեն կրնար հաւատալ թէ սոյալ Հիւֆնակէլ ծուղակի մէջ ձգած ըլլայ անգլիական և ամերիկեան զօրքերը: Երկու կառավարութեանց կողմէ, Հիւֆնակէլ գերման կառավարութեան յանձնուած է, իբր պատճառ իրենց մէկ քանի սպաններուն և զինուորներուն սպանութեան:

— Կրէտէի սահմանադրութիւնը վաւերացուեցաւ չորս պետութեանց կողմէ:

—)(—

Թերցողի առաջ պատկերանում է ամբողջ հասարակութիւնը իր իսկական գոյնով ու կերպարանով. ընթերցողը լարուած ու շարժութիւնով հետեւում է այդ հասարակութեան կեանքին, սոցիալական երեւոյթներին: Ընթերցողը փոխանակ հետաքրքրուելու, ոգեւորուելու անհատների կեանքով ու հոգեբանութիւնով: — Զօլայի վէպերի ազդեցութեան տակ՝ սկսում է հետաքրքրուիլ ու ոգեւորուիլ հասարակական հոգեբանութիւնով, ընդհանուր մարդկային արող խնդիրներով... Միւս կողմէ, անքտեսնում ենք Զօլայի Պարիզ անունով վէպի մէջ: Այս սեղ հեղինակը, իր ընթերցողի երեւակայութեան վրայ ազդելու համար՝ չի գիտում ոչ մի արհեստական չափազանցութեան: Զօլայի համոզմունքով՝ իրական կեանքը, այնպէս, ինչպէս որ նա կայ՝ հեռատես գիտողի ու խոր թափանցողի համար՝ այնքան հետա-

քրքիր, գրաւիչ ու կախարհիչ երեւոյթներ է պարունակում իր մէջ, որ կարող է յագուող սալ մարդու ամենավառ երեւակայութեան անգամ: Նրա գուրս բերած արքա Ֆրոմանը մի հասարակ հոգեւորական է, որ ունի առողջ ու գիտող խելք և ազնիւ, անկաշառ սիրտ: Այս երկու յատկութիւնները բաւական են, որ Պիերը (այսպէս է արքա Ֆրոմանի անունը) լուրջ կերպով հետաքրքրուի հասարակական-բարոյական խնդիրներով, ամբողջ պատմութեան ընթացքում մարդկութիւնը ճնշող ու մաշող ցաւերով: Եւ նրա ուշադրութիւնը վերջ ի վերջոյ՝ դրոււմ է Պարիզի յետ ընկած խուլ փողոցներում գեղերով, սովի ու ցրտի, կեղտի ու հիւանդութիւնների մէջ իր ողորմելի կեանքը քաշ սուղ մարդկութիւնը: Ազդեցւում այցելել հիւանդ ծերունի բանուր կալէօլին, Պիերը ման է գալիս Պարիզի աղքատ թաղերը և ակնատես է լինում

սոսկալի չքաւորութեան տեսարանների. ընթերցողի մազերը փշաքաղվում են կարգալով Զօլայի այդ նկարագրութիւնները: Իզուր կը լինի իմ կողմից աշխատել, գաղափար սալ ընթերցողին թէ՛ ինչպիսի չքաւորութեան տեսարաններ է նկարագրում Զօլան իր Պարիզում: Պէտք է կարգալ, գտնուիլ: պէտք է ընթերցողը ինքը փորձէ իր վրայ հանձարիղ վիպասանի ամենակարող գրչի ոյժը... Խեղճերի ու սանձուածների այդ հասարակութեան մէջ Պիերը ծանօթանում է մի զարգացած բանուրի հետ, որի անունն է Սալվատա արհեստաւոր է, բայց երկարատեւ անգործութեան պատճառով կըրում է ծայրայեղ չքաւորութեան սոսկալի հետեւանքները... Ոչ միայն ինքն է քաղցած, այլ և նրա կինը, նրա վաւակները ամենայն օր մտածում են կտոր հացի մասին, ինչպէս երկնային մանանայի: Պիերը ծանօթանում է Սալվատի հետ և

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ  
Բնիկ Ակնայ Լիճ գիւղացի Մ. Ա. զիքսանար Մելքոնեան, նախկին զասատու Տօպրիչի, որ այժմ Ռուսիանիա կը գտնուի: Իրմէ. կամ տեղեկութիւն սենեցող ազգայիններէն. կը խնդրուի որ անմիջապէս գրեն հասցէին խմբագրութեանս:  
— Նոյնպէս կը խնդրուի կեսարացի Սինան Թօփաքլուեանի մասին տեղեկութիւն սալ խմբագրութեանս:

Ա. Զ. Դ.  
Սլիվէնէն Տ. Յարութիւն Թնկերեան անմիջական պէտք ունի օգնական-ստիբիլի մը: Շարթիական, ամսական կամ տարեկան սակարկութիւն: Վճարում գոհացուցիչ: Դիմել ուղղակի իրեն:

ԵՐՈՎԱՅԻՆ ԶԲՈՍԱՐԱՆ «ԿՐՈՉՏ»  
Հանձն Բանաօջի Գիշի  
—  
Սոյն ամսոնային պարտէզին րացումը պիտի կատարուի յառաջիկայ կիրակի, անգործութեամբ Տ. Տիգրան Թիֆէնքեանի:  
2-1

ՎԱՐՈ  
ԵՐԿՈՒ ՍԷՐ  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ)  
(Գին 1 Ֆրանկ)  
—  
Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսալուք Հայկ Մայրականի սրճարանը:

Ա. Զ. Դ.  
—  
Հայ հասուն երիտաւարց մը որ գիտէ հաշուապահութիւն, ծանօթ է սոսկերէն և զաղղիբէն գրականութեան, կողմէ պաշտօն ստանձնել վաճառատան մը մէջ զիւրամաշիլ վարձատրութեամբ, կը համաձայնի նաեւ պարզ գործակատար ըլլալ:  
Դիմել խմբագրութեանս:

ԲԱՉՄԱՎԷՊ  
Ա. Մ. Ս. Ս. Ե. Բ. Թ.  
ԵՐԿ Տարի  
Տարեկան գին՝ 10 Ֆր. — 4 րուպլի. — 2 Տոլար:  
Հասցէ՝ Րէտաքստին աը լա ոը վիւ Բազմալէպ. Ս. Լադար:  
Վերնիզ (Իթալի)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ  
Печатняна „Взаимность“ Варна.

նրա մի քանի անորոշ խօսքերից ու շարժումներից եզրակացնում է, որ երկարատեւ չքաւորութիւնը այդ մարդուն հասցրել է յուսակաւոր անիշխանական գաղափարների... Սալվատի կինը ցոյց է տալիս Պիերին ծերունի կալէօլի տեղը. մի մարաքի մէջ, պատի սակ ընկած է հիւանդ ծերունին, որի հիւանդութիւնը խկակայն երկարատեւ քաղցած մտաւոր հետեւանք է: Սա ամբողջ իր կեանքում բանուր է եղել, իսկ ծերութեան հասակում միացել է այդ սեւօրին... Պիերը տալիս է նրան իր բերած փողերը, հաց է աւտում, կերակրում է սովամահ ծերունուն և խոստանում է նրան տեղաւորել քաղցործական հիւանդութեան մէջ: «Գերացած աշխատաւորների ապաստարանում»:  
ԵՐՈՒԱՆԻ ՂԱԶԱՐԵԱՆԾ  
(Մնացածը յարողով)